Տեղեկագիր

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՂԱԶԱԽ-ՇԱՄՇԱԴԻՆ

ՀԱՅՐԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

1917—1918 թ.

ԹԻՖԼԻՍ.

ՀԱՅԿԱՐԱՆ
ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՀԱՅԿԱՐԱՆ

1837
ԳԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԹԱՆԳԱՐԱՆ
2877

I

ԶԷՍԱԽ-ՇԱՄՇԱԴԻՆՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹԻՆԸ.

Ռուսական մեծ յեղափոխութիւնը փշրելով դարերի ծանր ու դաժան կապանքները ազատութիւն տուեց ժողովրդին դեմոկրատական սկզբունքներով կարգաւորելու և տնօրինելու իր սոցիալական տնտեսական ու քաղաքական խնդիրները։

Այս յեղափոխութեան այդ վառ օրերին էր, որ ծնունդ առաւ Զաղախ-Շամշադինցիների հայրենակցական միութիւնը։ 1917 թւի գարնանը Թիֆլիսում ապրող մի խումբ զուարդ երիտասարդներ անյետաձգելի պահանջ են համարում հիմնել մի միութիւն, որը իր նպատակներով ու ձգտումներով կարողանար նպաստել գիւղացութեան քաղաքական, տնտեսական կրթական, և այլ պահանջների զարգացմանը, արծարծելով տեղում իրաւահաւասարութեան և դեմոկրատիկ հասարակակարգութեան գաղափարները։

Նախնական խորհրդակցութեան ժամանակ նախաձեռնող անձանց զբաղեցնում էր զուարդացիների համախմբման խնդիրը, հեշտ չէր Թիֆլիսի պէս մեծ քաղաքում ցաք ու ցրիւ ապրող հայրենակիցներին մի տեղ հաւաքել միախմբել։ Սակայն այդ աշխատանքը թէև դժուարութեամբ, բայց կատարուում է. մի շարք բազմամարդ ժողովներում։ Նախանձեռնողներին յաջողւում է մշակել որոշ ծրագիր և անցնել գործի։

II

Վարչութեան կազմը.

Ղ. Շ. Հայրենակցութիւնը կազմակերպող ընկերները գլուխ բերելով այս դժուարին գործը հիմնեցին մի

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏ

ՇՈՅՈՒՆ վարչութիւն, որի մէջ մտնում էին հետևեալ գիւղերի ներկայացուցիչները.—Ղոշղոթան—Ա. Տէր-Սարգսեան, Կողբ—Յ. Տէր-Բարսեղեան, Քարանսարա (†) Տ. Էդիլեան և Ե. Գապեան. Բարամա՝ (†) Բ. Ամիրաղեան. Դիլիջան՝—Ս. Յարութիւնեան և Ս. Դաւթեան. Աշղի գիւղ՝—Գ. Աթաբէգեան. Բաշքենդ—Մ. Աստուածատրեան. Գոզոս-քիլսա—Ա. Անանեան. Սև-քար՝ Ս. Սարիբէգեան և Մինասեան. Կոթի գիւղ՝—Մ. Պետրոսեան. Ճիճեական—(†) Ն. Զելինգարեան. Դոստուլու—Յ. Ղարաքէշիշեան. Դովեղ՝—Մ. Մեհրաբեան. Թաթլու—Ա. Ապրեսեան. Ղուլալի—Ղ. Յարութիւնեան. Թովուզ — Յ. Յարութիւնեան Նորաշէն—Ն. Աւազեան։

Վերը յիշած վարչութիւնը ընտրում է իր միջից պրեզիդիում նախագահ՝ Ալեքսանդրի Տէր-Սարգսեան։ փոխնախագահներ. Մ. Պետրոսեան և Ե. Գապեան. գանձապահ Տ. Էդէլեան. քարտուղար Ե. Մուրադեան։ Վարչութիւնը ունենում է շաբաթական երկու նիստ և զբաղւում է ընդհանրապէս գաւառի բարելաւման և բարգաւաճման խնդիրներով։

III

Տեղում իրաւասու իշխանութիւններ հաստատելու խնդիրը.

Վարչութեանս գլխաւոր նպատակն էր հայրենիքում ստեղծել տանելի կացութիւն, ազատել գիւղացութիւնը տեղումն աճող աւազակութիւններից, թալանից, կողոպուտներից և մարդասպանութիւններից։ Այդ ուղղութեամբ վարչութիւնս աշխատում էր, գործ դնելով թէ իր բարոյական ոյժը գիւղերում և թէ իր դիմումներով Անդրկովկասի Յատուկ կոմիտէին, խնդրում էր նրա աջակցութիւնը գիւղերին վերաբերեալ բաղմազան խնդիրներում։

Այդ միջոցներում Անդրկովկ. Յատուկ կոմիտէի կողմից որոշած էր լիազօրներ ուղարկել Ղազախ-Շամշադին, տեղական ընտրութիւնները դեկավարելու և կազմակերպելու համար։ Վարչութիւնս համոզուած լինելով, որ այդ մարմիններից է կախուած տեղերում ստեղծել խաղաղ և անդորը կեանք, ու ամեն ջանք գործ դրեց, մշակեց լիազօրների համար թիկնածուների մի ցանկ, որի մէջ մտնում էին վարչութեանս յայտնի և այդ աշխատանքների համար պատրաստուած ոյժեր և յանձնեց Ա. Յ. կոմիտէին 'ի հաստատութիւն. դրա հետ միասին վարչութիւնս բանակցութեան մէջ մտաւ Բագուում կազմուած նոյնանման վարչութեան հետ, խնդրելով և նրանց աջակցութիւնը։ Վարչութեան աշխատանքը իզուր չանցաւ. Անդրկով. Յատ. կոմիտէն լիազորի պաշտօնում հաստատեց մեր թիկնածու Տիգրան Յովակիմեանին և նրա աւագ օգնական Միքայել Աստուածատրեանին։ Վերջիններս վարչութիւնից ստանալով որոշ հրահանգներ անցնում են գործի և ջանասիրութեամբ աշխատում են և իրանց վրայ դրած այդ ծանր պարտականութիւնները տանում բարեխղճութեամբ, յօգուտ Ղազախ-Շամշադինի ընդհանուր շահերի։ Դժբախտաբար վարչութիւնս չունի նրանց գործունէութեան գրաւոր զեկուցումները, սակայն նա միջոցներ է ձեռք առել ստանալու, որոնք իրենց հերթին կը ներկայացնեն ընդհանուր ժողովին։

IV

Ինքնապաշտպանութեան խնդիրը գաւառում.

Վարչութիւնս հնարաւորութիւն չի ունեցել իրագործել իր ծրագրած մի շարք կուլտուրական-կրթական խնդիրները, որովհետև գաւառի դրութիւնը վատանում էր։ Ղազախ-Շամշադինը գտանւում էր մի շրջացած օղակի մէջ, որը օր օրի վրայ հսկայական չափեր առնելով սեղմում, սպառնում էր այրելու և ընդմիշտ վերջ տալու նրա ֆիզիքական գոյութեանը։

Գիւղերից, երբ հեռից գալիս էին Թիֆլիս պատգամաւորներ և հայրենակցութիւնից օգնութիւն էին խնդրում։ Վարչութիւնս երկար խորհրդակցութիւններից յետոյ եկաւ այն անդրդուելի եզրակացութեան, որ գաւառի փրկութիւնը կայանում է միմիայն հարեւանների հետ համերաշխութիւն պահպանելու մէջ։ Եւ նա ղեկավարելով այդ սկզբունքներով ամենուրէք արծարծում ու տարածում էր այդ գաղափարը։

Սրան մեծ զարկ տուեց Յովաննէս Թումանեանի ձեռնարկութեամբ կազմած ինքնապաշտպանութեան յանձնաժողովը, որը գանուում էր իրան, Թումանեանի ղեկավարութեան տակ։ Այդ յանձնաժողովի մէջ մտնում էին հայրենակցութեանս կողմից Մէք. Աստուածատրեան, Ն. Աւագեան, Ե. Պապեան, և Լևոն Թումանեան։ Յանձնաժողովը անմիջապէս մեկնում է գաւառ և երկրի դրութիւնը տեղն ուտեղը ուսումնասիրելով անցնում է գործի։ Ինքը Յ. Թումանեանը շրջում է Լոռի և այլ տեղեր, մեր ընկերները անցնում են Ղազախ Շամշադին և շնորհիւ յանձնաժողովի խելացի և հմուտ աշխատանքների Ղազախ Շամադին և Լոռին մնացին անվտանգ և այն սոսկալի աղէտը, որ սպասում էր նրան, տեղի չունեցաւ։ Սրա հետ միասին վարչութեանս անդամ Արծիւ Աբովեանը Կոթի գիւղում տեղական երիտասարդներից կազմումէ միութիւն և իրա ղեկավարութեամբ պահում է գիւղը որոշ անդորրութեան և հանգստութեան մէջ։

V

Համազիւղացիական միութիւնների կազմակերպումը

Գիւղական միութիւններ Թիֆլիսում գոյութիւն ունէին նախ քան հայրենակցութեանս առաջ գալը. Կողբ և Քարանասարան ունէին իրանց միութիւնները և

որոշ աշխատանքներ կատարել էին հայրենի գիւղերում։ Վարչութիւնս ամեն կերպ աշխատում էր որպեսզի նման միութիւններ ունենան նաև Ղազախ-Շամշադինի և միւս գիւղերը։ Այդ առիթով եղան ընդհանուր ժողովներ, մշակուեց որոշ ծրագիր և հրահանգ. գիւղացիները համախմբեցին և այդպիսով կազմակերպուեց Կոթի գիւղը, (որը ունի իր տպաւած ծրագիրը), Սև քարը, Ղոշղոթանը և այլ գիւղեր։

VI

Հայրենակցութեան միութեան ծրագրի մշակումը։

Վարչութեանս առաջին աշխատանքների շարքումն էր և ծրագրի մշակումը. մտքերի փոխանակութիւնից յետոյ ընտրուեց մի մասնաժողով, որին յանձնարարուեց կազմել ծրագրի նախագիծը։ Մասնաժողովի անդամներն էին—Մ. Աստուածատրեան, Ս. Դաւթեան, Ա. Տէր Սարգսեան, և Տ. Յովակիմեան. վերջիններս ծրագիրը մշակեցին և 1917 թ. մայիսի 30-ին վարչական ժողովում քննութեան առնուեց և ընդունուեց (տես արձ. № 18). սակայն Ղազախ-Շամշատնեցիների ընդհանուր ժողովում նա հաստատութիւն չը գտաւ, այլ որոշուեց վերամշակել ծրագիրը և նորից ներկայացնել ընդհանուր ժողովին ի հաստատութեան։ Վարչութիւնս ի նկատի ունենալով ընդհանուր ժողովի տուած ցուցմունքները յանձնարարեց Մ. Պետրոսեանին վերամշակել ծրագիրը, որը և առանձին ներկայացումէ այժմ ընդհանուր ժողովին։

VII

Միութիւնների Միութեան կազմակերպութիւնը։

Բացի մեր հայրենակց. միութիւնից, որ առաջինն է Թիֆլիսում կազմակերպուեցին նաև Գանձակի, Լոռու, Ախալքալաքի, Շուլավերի և այլ միութիւններ։ Հանգամանքները ցոյց տուին, որ կան խնդիրներ, որոնք

վերաբերում են բոլոր միութիւններին. ինչպես օրինակ.—Քոչի, գաղթականութեան, ինքնապաշտպանութեան պարենաւորման և այլն։

Մեծ կարիք էր զգացւում ունենալ բոլոր գաւառներին շաղկապող մի կենտրոն, որը իրազէկ լինելով բոլոր գաւառների անցու դարձերին կը հեշտացնէր, կը նպաստէր նրա կարիքներին բարենպատակ լուծում տալու, նաև նրա հեղինակութիւնը, նրա պրեստիժը անպայման հաշւի կառնէր զանազան հիմնարկութիւնների, կառավարութեան կողմից։

Ահա այդ բոլորը ի նկատի ունենալով, Թիֆլիսում կազմւեց Միութիւնների Միութիւնը, որի աշխատանքներին մասնակցել են վարչութեանս ներկայացուցիչներ. Ս. Դաւթեան Մ. Դարբինեան և Ա. Տէր-Բարսեղեան իսկ կարևոր խնդիրներում նաև ամբողջ վարչութիւն։

VIII

Ղազախի սահմանների որոշման խնդիրը։

Լոռին և Ղազախ—Շամշադինը լինելով սահմանակից և իրարից հաւասարաբերաբար անբաժան, շատ բնական է, որ այդ երկու հայրենակցութիւնը իրար հետ պէտք մտնէին սերտ յարաբերութիւնների մէջ։

Նոյն այրող հարցերը, կարիքների նոյնութիւնը մօտեցրեց այդ երկու միութիւններին և նրանք ունեցան մի շատ խառը վարչական ժողովներ, ուր արծարծւեց գլխաւորապէս սահմանների խնդիրը և բազմակողմանի քննութիւնից յետոյ 2 անգամ հրաւիրւեց ընդհանուր ժողով, որտեղ քննութեան առնւեց այդ խնդիրը և ընդհանուր ժողովը տւեց, ամենքին յայտնի, իր հեղինակաւոր որոշումը։

IX

«Այրում» կայարանում կամուրջ կառուցանելու խնդիրը

Սահմանելով Ադրբէջանի հանրապետութիւն, Ղազախ Շամշատինը զրկւեց Աղստափա և Թովուզ կայարաններից, մնաց միակ յարմար հաղորդակցութեան ճանապարհը Այրում կայարանը, որից դեպի գաւառը երթեւեկութիւնը հեշտացնելու համար, Դեբետ գետի վրա անհրաժեշտ էր կառուցանել հիմնաւոր կամուրջ։ Սրա պահանջը չէր զգացւում, երբ դեպի մեր գաւառը բոլոր ճանապարհները ազատ էին, իսկ այժմ դա անհրաժեշտութիւն է և կարևոր խնդիր։

Այդ ի նկատի ունենալով վարչութիւնս որոշեց ի յիշատակ իր նորերս վախճանւած վարչութեան անդամների Տ. Էդիլեանի և Բ. Ամիրաղեանի հիմնել նրանց անւան կամուրջի ֆոնդ և երբ դրամագլուխը կը հաւաքւէր սկսէր կամուրջի շինութեան ձեռնարկութիւն, իսկ մինչև այդ վարչութիւնս՝ յանձնարարում է ընկ. Մ. Պետրոսեանին և Յ. Տէր-Բարսեղեանին կազմել կամուրջի մակարդակը և նախահաշիւը, այդ նպատակի համար յատկացնելով հայրենակցութեանս միջոցներից. 500 բուբլի։

X

Ինտիլիգենտ ոյժերին գաւառը վերադարձնելու խնդիրը։

Երբ ներկայ տարւա ամառը Թիֆլիսի հայութիւնը ապրում էր տագնապալից օրեր և մեծ մասամբ փախչում էր դեպի Վլադիկաւկազ. վարչութիւնս ամենաբուռն եռանդով համախմբեց իր շուրջը մօտ երեք հարիւր Ղազախ-Շամշադինցիներ և նրանց հետ միասին խորհրդակցելով, որոշեց անմիջապէս անցնել հայրենիք. միևնոյն ժամանակ խիստ արգելելով որևէ մէկին անցնել դէպի Վլադիկաւկազ։

Վարչութիւնս դիմումներ արաւ թէ ՀայոցԱզգային

Մարդին, թէ նախարութեան և թէ բանակցութեան մէջ մասաւ Կիլիկից եկած հայ կամաւորների էշելօնի հրամանատարի հետ, որի հետ և յաջողուեց գաւառ ուղարկել բոլոր ցանկացողներին։

Բացի այդ, տարեայ ընթացքում վարչութեան անդամներից շատերը անցնելով գաւառ նպաստելն գիւղացիութեան արժատախիլ անելու առթիւ արմատացած չարիքները։ Այդ ուղղութեամբ գործել են Ա. Աբովեան, Մ. Ասատուրեան, Ն. Աւագեան, Տ. Էդիլեան, Ե. Պապեան, Ա. Տէր-Բարսեղեան, Յ. Տէր-Բարսեղեան, Ա. Տէր-Սարգսեան, Տ. Յովակիմեան և ուրիշներ։

XI

Հանգանակութեան Խնդիրը։

Վարչութեան միակ մուտքը անդամավճարներն էին։ Մեր գաւառի հարուստներից և ոչ մէկը ինքնաբերաբար մեզ օգնութեան չեկաւ. մնում էր դիմել կամաւոր հանգանակութեանը և կազմակերպել միութեան օգտին ցերեկոյթ. հանգանակութիւնը դրական յեռանք չտուեց, ընդամենը ժողովեց 1116 (տես հաշուեւութիւնը)։ Բայց ցերեկոյթը ունեցաւ յաջողութիւն նա զուտ արդիւնք տուեց 5418 ր. 50 կ. (տես հաշուեւութիւն) յաջողութիւնը պարտականենք մասնաժողովի անդամներին, որոնք չ՝խնայեցին իրանց եռանդն ու ջանքերը տանելով իրանց ուսերի վրա ցերեկոյթի բոլոր ծանրութիւնները։

XII

Դաւառի համար մթերքներ մատակարարելը.

Տարեայ ընթացքում վարչութիւնն նաև զբաղուել է որոշ մթերքներ հայցնելով գաւառ. այդ առիթով նա փոխառութիւններ է արել թէ հիմնարկութիւններից, թէ մասնաւոր մարդկանցից և թէ իրանց գիւղացի-

ներից (տես հաշուեւութիւն). այդպիսով նրան յաջողուել է մի քանի վագոն ապրանք.— բէնզին, մեքենայի իւղ և այլ գործիքներ և իրեր, ուղարկել գաւառ, որով զգալի օգնութիւն է հասցրել գիւղացութեանը.

Վարչութեան նոր ընտրութիւը.

Վարչութեանս կազմից շատերը հայրենակցութեանս գործերով հեռացել էին դաւառ, անհրաժեշտութիւն կար ընտրել նոր վարչութիւն. այդ պատճառով 1918 թ. մարտի 4-ին հրաւիրուեց ընդհանուր ժողով, ուր հին վարչութիւնը տուեց իր անփոփ հաշուեւութիւնը, որից յետոյ ժողովականները գտան, որ վարչութեան պրեզիդիումի անդամներին հարկաւոր է ոճիկ նշանակել. երկար մտքերի փոխանակութիւններից յետոյ ձայների մեծամասնութեամբ որոշուեց. նախագահին և քարտուղարին սահմանել ամսական իւրաքանչիւրին 300-ական ռուբլի. ապա անցան ընտրութեան գաղտնի քուէարկութեամբ։ Ընդրուեցին Տ. Էդիլեան, Մ. Պետրոսեան, տիկ. Գոհ. Աւագեան, Յ. Տէր-Բարսեղեան, Ս. Դաւթեան, Ա. Տէր-Խաչատրեան, Ա. Տէր-Բարսեղեան, օր. Ա. Աբովեան և Ս. Սարիբէգեան, Անձնափոխանորդներ՝ Բ. Ամիրաղեան, Ս. Պապեան և Թանդելեան։ Նոր վարչութիւնը ընտրեց իրան նախագահ Մ. Պետրոսեանին. աչքի առաջ ունենալով հայրենակցութեանս սուղ միջոցները վերջինը հրաժարուեց ոճիկ ստանալուց, վերատուգիչ յանձնաժ. անդամներ՝ Աղաբէգ Ապրեսեան, Ա. Տէր-Խաչատրեան, Ի. Պապեան։ Մի առ ժամանակ քարտուղարութեան պաշտօնը տանում էր ինքը նախագահը, ապա վերջերս քարտուղար ընտրուեց Ս. Դաւթեանը, որը նոյնպէս հրաժարուեց ոճիկ ստանալուց։

Հաշվետուվթիւն.

Նախքան հաշվետուվթիւնը պէտք է նկատած, որ գաւառիս ունեւոր դասը ջերմ աջակցուվթիւն չի ցոյց տուել վարչուվթեանս. փոխառուվթիւնները նա արել է ազգային խորհրդից, գիւղացուվթիւնից. այդպիսով հայրենակցուվթիւնս հասցնելով իր բիւջէն մօտ 170,000 է պարտական է Ազգ. խոր. և գիւղացիուվթեան, որոնց յայտնում է իր խորին շնորհակալուվթիւնը և յոյս ունի նայնպէս, որ ապագայումն էլ նա խրախուսած կը լինի վերջիններէ կողմից։

ՄՈՒՏՔ	Դրամական			
Անդամակցական և պատահական մուտքեր.	235	15		
Նուէրներ	1116	—		
Ցերեկոյթից	5418	50	6769	65
Ղազախ-Շամշադինի գիւղերից մթերքներ գնելու համար	132760	—		
Ազգային խորհրդից փոխարինաբար. .	15000	—		
Տ. Էդիլեանից » . .	3335	64		
Տ. Յովակիմեանից » . .	5630	60		
Ա. Տ. Սարգսեանից » . .	3927	60		
Յ. Տ. Բարսեղեանից » . .	325	—		
Մթերքների վաճառումից » . .	1319	75	162299	59
			169069	24

ԵԼՔ	Ընդանուութիւն			
Փոխարինաբար Դ. Մխիթարեանին . .	800	—		
» Ա. Աբովեանին . .	700	—		
Ճանապարհածախս	650	—		
Յ. Դաւթեանին կորցրած իրերի փոխարէն.	500	—		
Յայտարարութեան ծախսեր . . .	80	—		
Գրասենեակային » . . .	332	50		
Դեղորայի և բժիշկական օգնութիւն. .	500	—		
Անդամակց. վճար միութեան միութեանց.	200	—		
Զանազան ծախսեր	631	52	4394	02
Մթերքներ գաւառի համար. . . .	107367	60		
Բենզին	14650	—		
Դիլիջան, Պող-քիլիսա, Զարխեչ և Գող գիւղերին վերադարձրած . .	5000	—		
Կոթի գիւղ և Ղողխոթանին վերադարձրան.	1100	—		
Ազգային խորհրդին	5000	—		
Զանազան անձանց				
Բ. Տէր-Անանեանին . . .	3000	—		
Տ. Էդիլեանին	3182	49		
Ա. Տ. Սարգսեանին . . .	4350	—		
Դաշնակցութեանը . . .	10000	—		
Զանազան ծախսեր մթերքներ գնելու առթիւ և ճանապարհածախս . .	7137	54	160787	63
Մնացորդ դրամարկղում » . .			3887	59
			169069	24

Ստացուած է				
Համաձայն կցուած ցուցակի . .			132760	—
			132760	—

Մթերքների

Գնուած է				
Համաձայն դրամական հաշուի . .			107367	60
Գոյացած արդիւնք			2672	15
			110039	75

Եկամուտ

Անդամակցական վճարներ, նուերներ և ցերեկոյթից.	6769	65		
Մթերքներից գոյացած արդիւնք . .	2672	15	9441	80
Դիֆիցիտ			589	76
			10031	56

Վերադարձուած է				
Կանխիկ դրամով	6100	—		
Մթերքներով.	108720	—	114820	—
Մնացորդ				
Գիւղերին դարձնուելիք . . .			17940	—
			132760	—

հաշիւ

Բաժանուած է				
Գիւղերին	108720	—		
Վաճառուած է	1319	75	110039	75
			110039	75

և ծախսեր

Ճանապարհածախս, դրասենեակային և այլն, նաև մթերքներ գնելու առթիւ ծախսեր			10031	56
			10031	56

ԱԿՏԻՒ			Հաշիւ			
Դրամարկղ						
Կանխիկ դրամ			3887	59		
Ապառիկներ						
Ա. Տէր-Սարգսեան . .	422.	40				
Գ. Տ.-Մխիթարեան. .	800	—				
Ա. Աբովեան. . .	700	—				
Բ. Տ.-Անանեան . .	3000	—				
Աւ. Թոչարեանի . .	10000	—	14922	40		
Բենզին			14650	—	33459	99
Դիֆիցիտ					589	76
					34049	75

ԿՇԻՌ			ՊԱՍՏԻՒ			
Վճարելիքներ						
Ազգային խորհրդին . . .	10000	—				
Գիւղերին	17940	—				
Տ. Էդիլեանին	153	15				
Տ. Յովակիմեանին . . .	5631	60				
Յ. Տ.-Բարսեղեանին . . .	325	—	34049	75		
			34049	75		

Գիւղերից ստացուած և վերադարձրած գումարների մանրամասն ցուցակը.

ԳԻՒՂԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Ստացուած է	Վերադարձրած մթերքներ. և կանխիկ	Ապառիկ մնացորդները
Խարանայ	5400	5280	120
Ղոշխոթան և Կոթի գիւղ . .	5300	4200 1100	—
Ղալաչայ	2640	2520	120
Դիլիջան, Պողոս քիլիսա Զարխէչ և Գող	15000	8400 5000	1600
Քարվանսարայ, Թալա Քրդևան, Խաշտառակ, Ղարանլուղ դարայ.	8760	6360	2400
Սև քար	3600	3120	480
Աչաջուր	4920	3840	1080
Ուզունթալայ	3600	3360	240
Լալի գիւղ	1800	1800	—
Ռևազլու	1460	1320	140
Ճամբարակ Նաւուր Թաթլու և Հախում	15360	7200	8160
Ղուլալի	7200	5880	1320
Զինաբլի	2040	1920	120
Մովսէս	6000	5880	120
Ղրղի	5160	5040	120
Նորաշեն	2520	2400	120
Վերին Կարմիր աղբիւր . . .	6120	5760	360
Ներքին » »	3120	3000	120
Բերթ	19320	18480	840
Թովուզ	10080	9720	360
Զինչին	960	960	—
Կրգեն	840	720	120
Զորաթան	1560	1560	—
	132760	108720 6100	17940

Նախագահ Մ. Պետրոսեան
Վարչ. անդամներ (†) Տ. Էրիլեան
Ս. Դաւթեան (քարտուղար)
Մ. Դարբինեան
Յ. Տէր Բարսեղեան
Ա. Տէր Խաչատրեան
Ա. Տէր-Բարսեղեան
Ս. Սարիբէգեան (գանձապահ)
Տիկ. Գ. Աւագեան
Օր. Ա. Աբովեան
Տ. Աբովեան

Ս. Յարութիւնեան . .	300 ր.
Արշ. Տ.-Խաչատրեան .	200 ր.
Սին. Սարիբէկեան . .	100 ր.
Հ. Բեջանեան . . .	10 ր.
Ա. Սիմոնեան . . .	10 ր.
Ա. Ղուլարեան . . .	10 ր.
Լ. Սարգսեան . . .	30 ր.
Ռ. Սարգսեան . . .	20 ր.
Մ. Բէջանեան . . .	5 ր.
Յ. Խեչիկեան . . .	10 ր.
Ա. Ապրեսեան . . .	10 ր.
Ս. Դաւթեան . . .	10 ր.
Մ. Աստուածատրեան . .	5 ր.
Ա. Պողոսեան . . .	10 ր.
Շ. Մելեան . . .	5 ր.
Լ. Մերհարեան . .	6 ր.
Տ.-Մելիքսեթեան . .	5 ր.
Ի. Տ.-Անանեան . .	5 ր.
Տ. Յովակիմեան . .	10 ր.
Գ. Պողոսեան . . .	5 ր.
Ն. Աւագեան . . .	10 ր.
Գ. Աւագեան . . .	10 ր.
Տ. Սարգսեան . . .	25 ր.
Գ. Խալաթեան . . .	25 ր.
Տ. Էդելեան . . .	25 ր.
Ս. Վարթազարեանց . .	25 ր.
Ն. Վարթազարեանց . .	15 ր.
Կողբ. Հայրենակց. Միութեան	160 ր.
Յ. Տ.-Յարութիւնեան .	25 ր.
Մ. Պետրոսեան . .	25 ր.
Յ. Սարգսեան . . .	5 ր.
	1116 ր.

Վերատուգիչ Յանձնաժողովը քննելով հայրենակցական Միութեան հաշիւները գտաւ մատեանները տարուած կանոնաւոր և թուերը համապատասխան փաստաթղթերին 10 դեկտեմբերի 1918 թ.

Ս. Ապրեսեան

1837
S - 30